ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր **Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

մանկավարժական գիտությունների թեկնածու **Ն. ԴԱՎՈՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 12^{00}-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. սեպտեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկն., դոցենտ **Ա. Հ. ՍՎԱՋՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Յուրաքանչյուր գիտական ոլորտի կարգավիճակն ու սոցիալական վարկը պայմանավորված են տեսության զարգացման մակարդակով, ինչը լիարժեք պատկերացում է տալիս իրականության որոշակի ոլորտն օբյեկտիվորեն արտացոլող օրենքների ու օրինաչափությունների մասին և տվյալ գիտության ուսումնասիրության առարկան է:

Գիտելիքների համակարգն արտացոլվում է տվյալ գիտության հասկացությունների և կատեգորիաների համակարգում: Գիտության մեջ հասկացությունների ամրապնդումը բավականին բարդ ու երկարատև գործընթաց է: Ձևավորվելով տարերայնորեն՝ որպես իրականության և էմպիրիկ փորձի իմաստավորման արդյունք, դրանք վերափոխվում են՝ դառնալով որևէ գիտական համակարգի բաղադրիչ:

Մանկավարժությունը՝ որպես հնագույն գիտություններից մեկը, ներկայումս ունի հասկացությունների որոշակիորեն ձևավորված համակարգ, որտեղ հստակության տարբեր աստիճաններով ամրագրված է մանկավարժական փորձը: Դրա հետ միասին՝ գիտական հասկացությունների համակարգում մշտապես կատարվում են գործընթացներ, որոնք կապված են հասկացությունների իմաստային փոփոխության, նոր հասկացությունների կողմից կատեգորիալ կարգավիճակի ձեռք բերման կամ, հակառակը, նրա առանձին կատեգորիաների կողմից նախկին նշանակության վերաիմաստավորման հետ:

Մանկավարժության հասկացություններին առնչվող տերմինաբանական խնդիրները սրվում են հատկապես նրա առավել կտրուկ զարգացման շրջաններում, կրթական համակարգի բարեփոխման պայմաններում: Այդ առումով մանկավարժության՝ որպես գիտության և պրակտիկ գործունեության ոլորտի առաջընթաց զարգացումն ուղեկցվում է մի շարք առանձնահատուկ խնդիրներով, որոնք վերաբերում են նրա հասկացությունների համակարգին:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի զարգացումը և բարեփոխումներն անհնար են առանց այդ գործընթացի մի շարք պայմանների որոշարկման: Այդ պայմաններից մեկը կարող է լինել ժամանակակից գիտամանկավարժական տեսության նորացումը, որն անհրաժեշտ է իրականացնել մանկավարժական տերմինաբանության և հասկացությունների՝ պատմականորեն ձևավորված համակարգի նորացման հիմքի վրա: Ենթադրվում է, որ կրթության մեջ մանկավարժական տերմինաբանության ոլորտում ինտեգրված գործընթացները հայրենական ավանդույթների վրա հիմնելը Հայաստանում ձեռք է բերում առանձնակի նշանակություն: Բացի այդ՝ հայրենական մանկավարժական տերմինաբանության զարգացման իմաստավորման կարևորությունը կապված է միջազգային ստանդարտացման գործընթացների հետ, որի առաջնային ուղղություններից մեկը ազգային տերմինաբանական կայուն հա-

մակարգի ստանդարտացումն է: Թե որքանով են խորապես վերլուծված հայրենական տերմինաբանության հիմնախնդիրները, ըստ այդմ՝ որոշարկվում է միջազգային կրթական ինտեգրման գործընթացներում Հայաստանի մասնակցության արդյունավետությունը:

Ժամանակակից հայ մանկավարժական գիտության մեջ տերմինաբանական-հասկացութային համակարգի հիմնախնդիրների լուծումն առաջնահերթություն: Այս ուղղությամբ հետազոտությունների նշանակալիությունը մեծապես կախված է մանկավարժական հասկացութային-տերմինաբանական համակարգի կազմավորման և զարգացման ամբողջ ճանապարհի խոր վերլուծությունից:

Այսպիսի իրադրությունը ծնում է համալիր հիմնախնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Մասնավորապես հարկ է նշել, որ ժամանակակից մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում որոշ հասկացություններ հաճախ նշանակվում են տարբեր տերմիններով, կամ հակառակը՝ որևէ տերմին կարող է բովանդակել սկզբունքորեն տարբեր հասկացություններ: Նույնիսկ այնպիսի կարևորագույն կատեգորիաներ, ինչպիսիք են՝ «կրթություն», «դաստիարակություն», «ուսուցում», ստանում են տարբեր, երբեմն հակասական մեկնաբանություններ: Նկատվում է նաև այնպիսի նոր բառերի և բառակապակցությունների թվի՝ գործնականում անկառավարելի աճ, որոնք հավակնում են մուտք գործել մանկավարժության տերմինաբանական համակարգ:

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ հասկացութային-տերմինաբանական համակարգի նորացմանն առնչվող ուսումնասիրությունները նպաստում են մանկավարժական գիտելիքի առավել խոր և կարգաբերված զարգացմանը, նրա տեսական կայունությանը:

Հետազոտության նպատակը: Տեսական հետազոտությունների հիման վրա բացահայտել ժամանակակից մանկավարժական հասկացությունների համակարգի զարգացման միտումները և հիմնավորել սոցիալական մանկավարժության՝ որպես մանկավարժության գիտաճյուղի հասկացությունների համակարգի նորացման անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը: Ժամանակակից մանկավարժության հասկացությունների համակարգն է:

Հետազոտության առարկան: Մանկավարժության գիտաճյուղերից մեկի՝ սոցիալական մանկավարժության հասկացությունների համակարգի նորացման գործընթացն է:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ ժամանակակից մանկավարժական հասկացությունների նորացումը և զարգացումը կլինեն արդյունավետ, եթե.

- բացահայտվեն մանկավարժական հասկացությունների համակարգի ձևավորման հիմնախնդիրները և հակասությունները,

• հիմնավորվեն մանկավարժական հասկացությունների նորացման գործընթացի անհրաժեշտությունը և զարգացման միտումները՝ պայմանավորված մանկավարժական նոր գաղափարների ու հայացքների կայացմամբ, ինչպես նաև պատմամշակութային, սոցիալ-քաղաքական, տնտեսական վերափոխումների և գիտատեխնիկական առաջընթացի գործոններով,

• բացահայտվեն մանկավարժական հասկացությունների բնութագրիչները փիլիսոփայության, լեզվաբանության և մանկավարժության դիրքերից,

• մշակվեն մանկավարժական հասկացությունների ճշգրտությունը և միանշանակությունն ապահովող մեթոդաբանական սկզբունքները:

Հետազոտության խնդիրները: Ըստ նպատակադրման և առաջ քաշած վարկածի՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Որոշել ժամանակակից մանկավարժական հասկացությունների համակարգի ուսումնասիրման, համակարգման և ձևավորման խնդիրները:

2. Բացահայտել ժամանակակից մանկավարժական հասկացությունների նորացման գործընթացի և զարգացման առաջատար գործոնները:

3. Բացահայտել սոցիալական մանկավարժության՝ որպես մանկավարժության գիտաճյուղի հասկացությունների համակարգի ձևավորման հակասությունները և հիմնախնդիրները:

4. Որոշել սոցիալական մանկավարժության հասկացությունների նորացման և հետագա զարգացման պայմանները:

Թեմայի մշակվածության աստիճանը: Խորհրդային շրջանի գիտամանկավարժական գրականության մեջ մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրությունն սկսվում է 1960-ական թվականների վերջից: Այդ բնագավառի առաջին աշխատություններից մեկը կարելի է համարել Ի. Մ. Կանտորի «Մանկավարժական բառարանագրություն և բառագիտություն» գիրքը, որտեղ բացահայտվել են մանկավարժության առումով բառարանահանրագիտարանային գրականության պատմությունը և տեսական հիմունքները՝ որպես մանկավարժական գաղափարների և մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվական աղբյուր: Հեղինակը փորձել է տեսականորեն վերլուծել մանկավարժական տերմինաբանության և մանկավարժական գիտելիքի զարգացման մեջ նրա դերը: Ավելի ուշ այս հարցը նույն հեղինակի կողմից առավել հիմնավոր կերպով ուսումնասիրվել է «Մանկավարժության հասկացութային-տերմինաբանական համակարգը. տրամաբանական-մեթոդաբանական հիմնախնդիրներ» գրքում:

Վերջին տարիներին մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրությունը գիտական գրականության մեջ իրականացվում է հետևյալ ուղղություններով.

• մանկավարժական գիտության հասկացութային-տերմինաբանական համակարգի կառուցվածքի և գործառույթների վերլուծություն (Վ. Ի. Գինեցին-

սկի, Ա. Ֆ. Զակիրովա, Վ. Մ. Պոլոնսկի, Տ. Ա. Ստարշինովա, Բ. Տ. Լիխաչև, Ա. Յա. Նայն, Գ. Ն. Շտինովա, Գ. Գ. Խայրուլին).

- մանկավարժական գիտելիքի բնագավառի տերմինաբանության վերլուծություն՝ ընդհանուր մանկավարժության (Ի. Մ. Պուլատով), դիդակտիկայի (Ա. Վ. Բորդովսկի, Ե. Վ. Վոստոկովա, Բ. Ս. Գերշունսկի, Վ. Ի. Գինեցինսկի, Ս. Վ. Երյոմինա, Վ. Վ. Կրաևսկի, Վ. Ա. Իզվոզչիկով և այլք), դաստիարակության տեսության (Վ. Ս. Բեզրուկովա, Վ. Ի. Գինեցինսկի, Ի. Վ. Կիչևա, Բ. Պետրուշկին և այլք).
- մանկավարժական ուսումնասիրություններում տերմինների միանշանակության հիմնախնդրի մշակում (Վ. Վ. Կրաևսկի, Ն. Լ. Կորշունովա).
- էթնոմանկավարժության հասկացութային համակարգի ուսումնասիրություն (Զ. Օ. Կեկեևա, Ե. Լ. Խրիստովա և այլք).
- մանկավարժական գիտության բառապաշարի վերլուծություն լեզվաբանական տեսանկյունից (Ռ. Մ. Տագիևա, Վ. Օ. Տեն և այլք):

Այս բնագավառում հայ մանկավարժներից այսօր ակտիվ աշխատանքներ է կատարում մանկավարժական գիտությունների դոկտոր Ս. Պ. Մանուկյանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մանկավարժության և հոգեբանության հիմնարար հայեցակարգային դրույթները, մոտեցումները և սկզբունքները: Որպես հիմնական մեթոդաբանական մոտեցումներ են ընդունվել համակարգային և տրամաբանական-պատմական մոտեցումները, որոնց լույսի ներքո մանկավարժական հասկացությունների համակարգի ձևավորումը, նորացումը և զարգացումը բացահայտվել են որպես բազմաչափ ամբողջական գործընթաց, որը պայմանավորված է ներքին՝ մանկավարժական, և արտաքին՝ սոցիալ-քաղաքական, մշակութային և տնտեսական գործոնների ազդեցության հանրագումարով:

Նշված խնդիրների լուծման և դրանով իսկ հետազոտության նպատակին հասնելու համար հետազոտության մեթոդաբանական հիմք է ընդունվել դաստիարակությունը որպես օբյեկտիվ, մարդկանց ցանկություններով ու կամքով չպայմանավորվող, բայց նրանց գործունեության բնույթով որոշվող իրողությունը ինչպես գնահատված է մանկավարժագիտության ականավոր ներկայացուցիչների աշխատություններում, և դրանց համապատասխան՝ Ա. Ս. Մակարենկոյի «Մեր արտադրության բնագավառը դաստիարակության բնագավառն է» դրույթը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության իրականացման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. Հիմնախնդրին նվիրված գիտական գրականության վերլուծության մեթոդ՝ բացահայտելու համար հիմնախնդրի առկայության, նրա ընդունվածության և նկատվածության աստիճանը՝ հնարավորություն ունենալով անհրաժեշ-

տության դեպքում սկսելու համարժեք որոնումներ՝ այն բարեփոխելու նպատակադրմամբ:

2. Գրականության մեջ հետազոտությանը վերաբերող հասկացությունների վերհանման և միմյանց հետ համեմատելու մեթոդները՝ բացահայտելու համար գրականության մեջ ներկայացված՝ միմյանց հետ դրանց ունեցած հարաբերակցության պատկերը, հիմքեր ստեղծելով՝ հարկ եղած դեպքում կատարել պահանջվող շտկումները:

Հետազոտական աշխատանքի հերթական փուլերը:

Առաջին փուլում (2008-2009 թթ.) կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, լեզվաբանական և մանկավարժական գրականության ուսումնասիրում: Այդ նյութերի համեմատման-համադրման և տրամաբանական-պատմական վերլուծության հիման վրա բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման և զարգացման հիմնական գործոնները և ձևավորման սկզբունքներն ու պայմանները:

Երկրորդ փուլում (2010-2011 թթ.) կատարվել է «Սոցիալական մանկավարժության» բուհական դասագրքերի ամբողջական ուսումնասիրություն՝ դրանց կառուցվածքի և բովանդակության մեջ առկա թերությունների բացահայտման նպատակով:

Երրորդ փուլում (2012-2013 թթ.) իրականացվել են աշխատանքներ «սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների հարաբերակցության հստակեցման ուղղությամբ՝ հոգեբանական գրականության ուսումնասիրության միջոցով բացահայտելով տեսական նախադրյալներ, որոնք ևս հիմնավորում են սոցիալական մանկավարժությունից սոցիալական դաստիարակության անցնելու անհրաժեշտությունը:

Չորրորդ փուլում (2014-2015 թթ.) իրականացվել են հետազոտության արդյունքների ամփոփումը և ատենախոսության գիտական շարադրումը:

Հետազոտության հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովվել են ատենախոսության տրամաբանական կառուցվածքով, հիմնախնդրի բացահայտմամբ, նպատակի և խնդիրների լուծման համալիր մոտեցմամբ, հետազոտության տեսական մեթոդների կիրառմամբ, նաև վերնագրի, նպատակի, նորույթի ու պաշտպանության ներկայացված դրույթների համակարգվածությամբ:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների բնութագրիչները փիլիսոփայության, լեզվաբանության և մանկավարժության դիրքերից:

2. Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման միտումները՝ որպես մանկավարժական գիտության հիմնախնդրային դաշտի

արտացոլում՝ փոխկապակցված մանկավարժության տեսության և պրակտիկայի, հասարակական կյանքի սոցիալ-քաղաքական, մշակութային, գիտական և տնտեսական փոփոխությունների հետ:

3. Ներկայացվել են մանկավարժության գիտաճյուղերից մեկի՝ սոցիալական մանկավարժության առարկայական լեզվի և նրա հիմնական հասկացությունների ու կատեգորիաների մեկնաբանության հիմնախնդիրները:

4. Մշակվել է սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակությամբ փոխարինելու հիմնախնդրի լուծման գիտելիքների համակարգ այն մասին, որ.

ա) Իրականությանը չի համապատասխանում մանկավարժության մեջ սոցիալական դաստիարակի գործունեությունը մանկավարժական համարելը՝ օգտագործելով «սոցիալական մանկավարժ» հասկացությունը, քանի որ մանկավարժ-դաստիարակի և սոցիալական դաստիարակի գործառույթները արմատապես տարբերվում են միմյանցից: Նույն հիմնավորմամբ էլ գիտության «սոցիալական մանկավարժություն» անվանումը նպատակահարմար է փոխարինել իրականությանը համապատասխանող «սոցիալական դաստիարակություն» անվանմամբ:

բ) «Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների բովանդակությունների համեմատությունից բխում է այն եզրակացությունը, որ սոցիալականացումը սոցիալական դաստիարակության արգասիքներից է, հետևաբար դրանք չեն բովանդակում միմյանցից առանձին իրողություններ, ինչպես այսօր հստակ ներկայացնում է մանկավարժությունը: Այս բացահայտումով ձեռք բերված գիտելիքներն իրենց հերթին հիմք են դառնում սոցիալական դաստիարակության կառուցման համար:

Հետազոտության արդյունքների տեսական նշանակությունը:

Բացահայտվել են մանկավարժական հասկացությունների նորացման էությունը և միտումները՝ կապված մանկավարժության տեսության և պրակտիկայի դինամիկայի ու կյանքի պայմանների սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային վերափոխումների հետ: Վերջինս ընդլայնում է գիտական պատկերացումները մանկավարժական գիտության զարգացման վերաբերյալ: Բացահայտելով մանկավարժական հասկացությունների համակարգի հակասությունները և նորացման հիմնախնդիրները՝ զարգանում է մանկավարժական տերմինաբանության ընդհանուր տեսությունը:

Դաստիարակության տեսությունը հարստացվում է «սոցիալական դաստիարակություն» հասկացության նոր բովանդակությամբ, որի շնորհիվ մանկավարժական գիտությունը համալրվում է դաստիարակությունը դպրոցի գերակա նպատակ դարձնող տեսական դրույթներով, որոնք նպաստում են ուսուցմամբ իրականացվող դաստիարակության կառավարման տեսության զարգացմանը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել «Մանկավարժություն» և «Սոցիալական մանկավարժություն» դասընթացների դասավանդման ընթացքում: Միաժամանակ դրանք կարող են հիմք հանդիսանալ մանկավարժական բառարաններում համարժեք շտկումներ կատարելու համար:

Հետազոտության արդյունքների տեսական օբյեկտիվ նշանակությունը կրթական համակարգի ղեկավարության կողմից համարժեք գնահատվելու դեպքում արմատական փոփոխությունների կենթարկվի սոցիալական դաստիարակության կառավարման պրակտիկան՝ հիմնական շեշտը դնելով դաստիարակչական աշխատանքների վրա, միաժամանակ մանկավարժական բուհերում սոցիալական դաստիարակների պատրաստման գործընթացը կառանձնացվի մանկավարժների պատրաստման պրակտիկայից:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ներկա պայմաններում մանկավարժական հասկացությունների նորացման գործընթացը պայմանավորված է ժամանակակից մանկավարժության նոր գաղափարների և հայացքների կայացմամբ, ինչպես նաև պատմական-մշակութային, սոցիալ-քաղաքական, տնտեսական վերափոխումների և գիտատեխնիկական առաջընթացի գործոններով:

2. Սոցիալական մանկավարժության՝ որպես մանկավարժության գիտաճյուղի կարևորագույն և բարդ հիմնախնդիրներից են նրա հասկացությունների համակարգի ձևավորումը, նորացումը և զարգացումը, առանց որոնց այն՝ որպես գիտական գիտելիքի ինքնուրույն բնագավառ, գոյություն ունենալ չի կարող:

3. «Սոցիալական մանկավարժ» հասկացությունը պետք է փոխարինվի «սոցիալական դաստիարակ» հասկացությամբ, քանի որ այդպես կոչվող մասնագետը չի զբաղվում մանկավարժական գործունեությամբ:

4. Իրականությանը չեն համապատասխանում մանկավարժական գրականության մեջ մանկավարժությունը սոցիալական աշխատանքի հիմքերից մեկը համարելը և սոցիալական դաստիարակի աշխատանքը սոցիալական աշխատանքի հետ նույնացնելը:

Խնդրահարույց է նաև «սոցիալական աշխատող» մասնագիտությունը մանկավարժության առարկայական սահմաններում ընդգրկելը:

5. Իրականությանը չհամապատասխանող «սոցիալական մանկավարժությունը» փոխարինելով իրականությանը համապատասխանող «սոցիալական դաստիարակությամբ»՝ հնարավոր կլինի «սոցիալական մանկավարժություն» կոչվող բուհական ուսումնական առարկայից և այդպիսի դասագրքերից անցում կատարել «սոցիալական դաստիարակություն» անվանվող ուսումնական առարկայի և համապատասխան դասագրքերի ստեղծմանը և, որ առավել կարևոր է, սոցիալական դաստիարակության խնդիրները լուծելու անկարող սոցիալական

մանկավարժությունը փոխարինել այդ լուծումն ապահովող սոցիալական դաստիարակությամբ:

Հետազոտության փորձաքննությունն ու արդյունքների ներդրումը:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, Վանաձորի թիվ 5 ավագ, թիվ 28 և թիվ 7 հիմնական դպրոցներում: Փորձաքննության հավաստիությունն ապահովվել է ՎՊՀ-ում կազմակերպված գիտաժողովում «Սոցիալական աշխատանքը մանկատանը» թեմայով ելույթով, ինչպես նաև գիտական ամսագրերում հրապարակված 7 հոդվածներով:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 135 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի առաջին գլուխը՝ «*Հետազոտության գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը»,* բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «*Մանկավարժական տերմինաբանության ճշգրտության և միանշանակության պահպանումը որպես մանկավարժության հրատապ խնդիր»,* ներկայացվում է մանկավարժական կատեգորիաների բնութագիրը փիլիսոփայության, լեզվաբանության և մանկավարժության դիրքերից, վերհանվում են հասկացությունների և տերմինների յուրահատկությունները և փոխադարձ կապը: Հատուկ ուշադրություն է սևեռված մանկավարժական հասկացությունների զարգացման և կառուցվածքի գնահատման տարբեր մոտեցումներին:

Գիտամանկավարժական վերլուծությունների հիման վրա բացահայտվում են մանկավարժական գիտության հասկացութային-տերմինաբանական ապարատին բնորոշ մի շարք առանձնահատկություններ:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «*Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունների և կատեգորիաների մեկնաբանման հիմնախնդիրները»,* դիտարկվում են սոցիալական մանկավարժության՝ որպես մանկավարժության գիտաճյուղի հասկացությունների համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները: Հիմնավորվում է սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունների և կատեգորիաների նորացման անհրաժեշտությունը՝ ելնելով առարկայական լեզվի առանձնահատկություններից: Այդ նպատակով ներկայացվում են տարբեր հեղինակների կարծիքները:

Վերլուծվում են նաև սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունների և կատեգորիաների մեկնաբանության հիմնախնդիրները:

Երկրորդ գլխում՝ «*Սոցիալական մանկավարժությանը նվիրված մի քանի աշխատությունների քննական վերլուծությունը «սոցիալական մանկավարժ» հասկացությունը «սոցիալական դաստիարակ» հասկացությամբ փոխարինելու նպատակադրմամբ»,* ներկայացվում է սոցիալական մանկավարժությանը նվիրված աշխատությունների ուսումնասիրության շնորհիվ ստացված արդյունքներից բխող «սոցիալական մանկավարժ» հասկացությունից հրաժարվելու անհրաժեշտության հիմնավորումը:

Ատենախոսության հիմնախնդրի լուծման համար կազմակերպվել է դասագրքերի ուսումնասիրություն՝ հետազոտության մեթոդաբանական հիմք ընդունելով այն դրույթը, որ մանկավարժական և դաստիարակչական գործունեությունները միշտ չէ, որ միևնույն հարթության վրա են դրվում: Այստեղ շեշտը դրվում է նրա վրա, որ յուրաքանչյուր մանկավարժ և մանկավարժական գործունեություն որակվում է որպես դաստիարակ և դաստիարակչական գործունեություն, այնինչ ամեն դաստիարակ չէ, որ մանկավարժ է, և ամեն դաստիարակչական գործունեություն չէ, որ մանկավարժական է:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «*Վ. Դ. Սեմյոնովի «Սոցիալական մանկավարժություն. պատմությունը և ներկան» աշխատությունը դիտարկման առարկա»,* աշխատության ուսումնասիրությամբ հիմնավորվում է, որ այդտեղ իրականում խոսքը սոցիալական դաստիարակության մասին է: Հեղինակն իր աշխատության մեջ խոսում է միայն և միայն դաստիարակության մասին, ինչը բացահայտել են նաև Բ. Զ. Վուլֆովը և Վ. Դ. Իվանովը, որոնք արձագանքել են այդ աշխատությանը վերաբերող հատուկ հոդվածով՝ դրական գնահատելով գրվածը, միևնույն ժամանակ սոցիալական մանկավարժին վերագրելով դաստիարակչական գործառույթ:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «*Ա. Վ. Մուդրիկի, Յու. Վասիլկովայի, Գ. Ն. Շտինովայի «Սոցիալական մանկավարժություն» դասագրքերում ներկայացվածը դաստիարակության նոր հայեցակարգի լույսի տակ»,* դիտարկվում են Ա. Վ. Մուդրիկի «Սոցիալական մանկավարժություն» դասագրքում տեղ գտած այնպիսի դատողություններ, պատկերացումներ և դրույթներ, որոնք վկայում են, որ այդ դասագիրքը նվիրված է միայն սոցիալական դաստիարակության խնդիրների լուսաբանմանը: Գրքի տարբեր էջերում հաճախ է գրվում, որ սոցիալական մանկավարժությունն ուսումնասիրում է սոցիալական դաստիարակությունը սոցիալականացման համատեքստում, կամ «սոցիալական մանկավարժությունը հետազոտում է հասարակության դաստիարակչական ուժերի «ինտեգրացիան»: Նման դատողությունները ստիպում են մտածել, որ ճիշտ չէ ոչ մանկավարժական գործընթացներով կայացող դաս-

տիարակության մասին խոսելը՝ օգտագործելով «սոցիալական մանկավարժություն» հասկացությունը, այն դեպքում, երբ խոսքը պետք է վերաբերի սոցիալական դաստիարակությանը:

Բացահայտվել է «սոցիալական մանկավարժ», «սոցիալական աշխատող» և «սոցիալական դաստիարակ» հասկացություններին վերաբերող գիտելիքների բնագավառում առկա խառնաշփոթը: Պահանջվում է հստակեցնել այդ հասկացությունների բովանդակությանը վերաբերող պատկերացումները՝ միմյանցից ունեցած տարբերություններով: Եթե կան սոցիալական դաստիարակություն, սոցիալական մանկավարժություն և սոցիալական աշխատանք կոչվող իրողությունները, ապա անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուրին վերաբերող պատկերացումները: Այս հարցում կարևորվում է «սոցիալական մանկավարժ» հասկացությունից հրաժարվելը, քանի որ այդ մասնագետը մանկավարժ չէ: Հրաժարվելու գաղափարը նույնպես հիմք է ստեղծում սոցիալական մանկավարժությունից սոցիալական դաստիարակության անցնելու համար:

Վերլուծության առարկա է դարձել նաև Գ. Ն. Շտինովայի և Մ. Ա. և Յ. Ն. Գալագուզովաների «Սոցիալական մանկավարժություն» դասագիրքը, որի հեղինակներն այնքան էլ հստակ պատկերացում չունեն մանկավարժական գիտության մասին, այդ պատճառով էլ բազմաթիվ երևույթներ, պատկերացումներ և մոտեցումներ վերագրել են մանկավարժությանը:

Այս դասագրքի քննական վերլուծությունը ևս անհրաժեշտություն է առաջացրել, որ «սոցիալական մանկավարժ» հասկացությունը փոխարինվի «սոցիալական դաստիարակ» հասկացությամբ, իսկ «սոցիալական մանկավարժություն»-ն էլ՝ «սոցիալական դաստիարակություն» հասկացությամբ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «*«Սոցիալական մանկավարժություն» հասկացությունը Լ. Պ. Կրիվշենկոյի խմբագրած «Մանկավարժություն» դասագրքում»,* խոսվում Լ. Պ. Կրիվշենկոյի «Մանկավարժություն» բուհական դասագրքում առանձին ներկայացված «Սոցիալական մանկավարժություն» բաժնի մասին: Այստեղ սոցիալական մանկավարժությունը համարվում է գիտություն դաստիարակության մասին, բայց չի կոչվում իր առարկայի անունով: Ըստ հեղինակի՝ այդ մանկավարժներն աշխատում են ընտանիքներում՝ աջակցել նպաստներ, կենսաթոշակ, բժշկական և այլ օգնություններ ստանալու գործում, որոնք կապ չունեն մանկավարժական գործունեության հետ:

Այդ դասագրքում սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակներից են համարվում երեխաների սոցիալական և կանանց շահերի պաշտպանությունը, ինչպես և հաշմանդամների նկատմամբ դրսևորվող հոգատարությունը և այլն, որոնք վերաբերում են միայն սոցիալական աշխատողի, բայց ոչ մանկավարժի գործունեությանը, քանի որ ամեն ինչ սոցիալական դաստիարակին և սոցիալական դաստիարակությանն է վերաբերում, այսինքն՝ այստեղ ևս սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակություն հա-

մարելու լուրջ հիմքեր կան:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ ***««Սոցիալական դաստիարակ» հասկացությունը անհարկի նույնացնելը «մանկավարժ» հասկացությանը Մ. Վ. Շակուրովայի «Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան և տեխնոլոգիան» աշխատության մեջ»,*** քննական վերլուծության առարկա է դարձել Մ. Վ. Շակուրովայի «Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկան և տեխնոլոգիան» աշխատությունը, որտեղ ևս խոսվում է ոչ թե սոցիալական մանկավարժության, այլ սոցիալական դաստիարակության մասին, քանի որ դասագրքում ներկայացված սոցիալական մանկավարժի գործառույթներից են ընտանիքների, աշխատանքային կոլեկտիվների, լրատվական միջոցների և միկրոսոցիումի օգնությամբ ապահովել անձի շահերի ու իրավունքների պաշտպանությունը: Անգամ քրեակատարողական հիմնարկներում աշխատողը, որի պարտականությունն է կատարել զուտ դաստիարակչական աշխատանքներ, դարձյալ համարվում է սոցիալական մանկավարժ: Ներկայացվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ սոցիալական դաստիարակը նույնացվում է մանկավարժի հետ, որը չի համապատասխանում իրականությանը:

Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ ***«Սոցիալական մանկավարժության վերաբերյալ ուսումնագիտական գրականության մեջ արտահայտված դատողությունները՝ քննախույզ ուսումնասիրության առարկա»,*** ուշադրություն է դարձվել այն փաստի վրա, որ եթե մի ժամանակ սոցիալական մանկավարժ և սոցիալական աշխատող տերմիններն առանձնացվում էին, ապա այսօր արդեն սոցիալական աշխատանք և սոցիալական մանկավարժություն գիտակարգերը հաճախ են համարվում նույնը՝ տարբեր անուններով, մինչդեռ սոցիալական աշխատողը գործ ունի անհատների հետ՝ նպաստելու նրանց գոյատևմանը, իսկ սոցիալական դաստիարակն իրականացնում է մարդու դաստիարակությունը սոցիումում:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «***Սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակությամբ փոխարինելու հնարավորության իրականացումը»,*** նվիրված է այդ խնդրի լուծմանը:

Ըստ երրորդ գլխի առաջին ենթագլխի՝ «***«Սոցիալականացում» հասկացության կայացման փուլերի բնութագիրը»,*** ժամանակակից մանկավարժության մեջ սոցիալականացումը չի դիտարկվում որպես դաստիարակության տեսակ: Այստեղ այդ երկուսը ներկայացվում են իբրև միմյանցից առանձին երևույթներ, սակայն իրականում երկու դեպքում էլ խոսքը մարդու մեջ կատարվող որակական փոփոխությունների մասին է, միայն թե դաստիարակությունը դիտարկվում է որպես ամեն տեսակ փոփոխությունների գործընթաց, իսկ սոցիալականացումը՝ միայն անձի սոցիալական կոչվող որակների ձևավորման գործընթաց: Ահա թե ինչու առավել իրական է սոցիալականացումը

ներկայացնել որպես սոցալական դաստիարակության արգասիք, իսկ սոցիալական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության տեսակներից մեկը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «***Սոցիալական մանկավարժությունից սոցիալական դաստիարակության անցնելու հիմնավորումը «մանկավարժական գործընթաց» և «մանկավարժական գործունեություն» հասկացությունների բովանդակությանը և ծավալին դիմելով»,*** ներկայացվել են տարբեր հեղինակների աշխատությունների ուսումնասիրության այն արդյունքները, որոնց շնորհիվ մեկ անգամ ևս հիմնավորվում է սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակությամբ փոխարինելը:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «***«Սոցիալական աշխատանք», «սոցիալական մանկավարժություն» և «սոցիալական մանկավարժ» հասկացությունները քննարկման առարկա»,*** ներկայացվում են հասկացությունները միմյանց հետ համեմատելու արդյունքները թույլ են տալիս մտածելու, որ դրանք համարժեք չեն արտացոլում սոցիալական ոլորտում կատարվող աշխատանքների էությունը, ինչը անհրաժեշտ է դարձնում հրաժարվելը դրանցից՝ փոխարինելով այդ ամենն իրականությանը համարժեք «սոցիալական դաստիարակ», «սոցիալական դաստիարակություն» և «սոցիալական դաստիարակություն» հասկացություններով:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «***«Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների՝ միմյանց հետ ունեցած իրական հարաբերակցության աղավաղումը մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ»*** ներկայացվել են սոցիալականացումը դաստիարակությունից առանձնացնելու և այդ երկուսն առանձին գործընթացներ դիտարկող դրույթներն ու պատկերացումները տարբեր հեղինակների աշխատություններում: Ուշագրավ է նաև այն, թե ինչպես են որոշ հեղինակներ միմյանցից տարբերում «դաստիարակություն», «կայացում», «ձևավորում» և «սոցիալականացում» հասկացությունները, ինչը չի համապատասխանում իրականությանը: Իրականում այս սահմանումները միմյանցից տարբերվում են միայն բառային ձևակերպումներով, բայց ոչ բովանդակությամբ:

Բոլոր դեպքերում էլ եզրակացությունը մեկն է. ընդհանուր հասկացությունը «դաստիարակությունն» է, և «սոցիալականացում»-ը նրա համար ենթահասկացություն է: Անդրադարձ է կատարվում հոգեբանական գրականության մեջ «սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների հարաբերակցությանը: Հոգեբանների օգտագործած «սոցիալական դաստիարակություն» հասկացությունն անգամ ցույց է տալիս, որ ըստ նրանց՝ սոցիալականացումը սոցիալական դաստիարակության արգասիքն է, իսկ այդ դաստիարակությունն էլ պետք է դառնա սոցիալական դաստիարակության առարկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Մանկավարժական տերմինաբանության ուսումնասիրման հարցում միջառարկայական մոտեցումը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել նրա յուրահատկությունը, համակարգել կառուցվածքը, հետևաբար նպաստել մանկավարժական իմացության կանոնակարգմանը:

2. Յուրաքանչյուր գիտության, այդ թվում նաև մանկավարժական գիտության մեթոդաբանությունը պահանջում է ճշգրիտ և միանշանակ տերմինաբանության մշակում, որը կարևոր է թե՛ տեսաբանների, թե՛ մանկավարժների համար: Միակ, ճշգրիտ, միանշանակ մանկավարժական տերմինաբանությունը մանկավարժության հիմնախնդիրների քննարկման ժամանակ փոխըմբռնման և արդյունավետության կարևորագույն միջոց է:

3. Սոցիալական մանկավարժության հասկացությունների համակարգին բնորոշ են այնպիսի իմաստաբանական գործընթացներ, ինչպիսիք են բազմիմաստությունը, հոմանիշությունը, հականիշությունը, փոխաբերականացումը: Առավել սուր է դրված սոցիալական մանկավարժության բազմաթիվ հասկացությունների ծավալային հոմանիշության խնդիրը, մասնավորապես՝ սոցիալականացման, սոցիալական դաստիարակության, սոցիալական միջավայրի: Այդ առնչությամբ ակնհայտ է դառնում, որ անհրաժեշտ է սոցիալական մանկավարժության կատեգորիաների և հասկացությունների գիտական իմաստավորում:

4. Սոցիալական մանկավարժության կարևորագույն ու միաժամանակ բարդ հարցերից է հասկացութային համակարգի ձևավորման ու զարգացման խնդիրը, առանց որի այն՝ որպես գիտական գիտելիքի ինքնուրույն ճյուղ, չի կարող գոյություն ունենալ:

5. Այն իրողությունը, որ սոցիալական մանկավարժության գրեթե բոլոր դասագրքերում խոսվում է հիմնականում սոցիալական դաստիարակության մասին, արդեն իսկ վկայում է, որ այն պետք է կոչվի ոչ թե «սոցիալական մանկավարժություն», այլ «սոցիալական դաստիարակություն»:

6. Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները և տարբեր դասագրքերի ուսումնասիրությունները՝ սոցիալական մանկավարժն իրականում սոցիալական դաստիարակ է, իսկ սոցիալական մանկավարժությունը՝ սոցիալական դաստիարակություն: Անհրաժեշտ է օգտագործել «սոցիալական դաստիարակ» և «սոցիալական դաստիարակություն» հասկացությունները:

7. Անընդունելի է «սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունները միմյանցից տարբերելու միտումը, քանի որ «սոցիալական դաստիարակություն» հասկացության գոյությունն անգամ ցույց է տալիս, որ սոցիալականացումը սոցիալական դաստիարակության արգասիքն է, իսկ այդ դաստիարակությունն էլ պետք է դառնա սոցիալական դաստիարակության առարկան:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում:

1. **Պետրոսյան Ա.**, Սոցիալական աշխատանքը մանկատանը: Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին), Վանաձոր, 2009, էջ 235-240:

2. **Պետրոսյան Ա.,** «Սոցիալականացում» հասկացության կայացման փուլերի բնութագիրը գիտության մեջ: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 4(24), 2009, էջ 183-186:

3. **Պետրոսյան Ա., Մխիթարյան Վ.,** «Մանկավարժագիտության պաշտոնականացված դասագիրքը՝ քննարկման առարկա: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 1(25), 2010, էջ 119-128:

4. **Պետրոսյան Ա.**, Սոցիալական աշխատանքը, սոցիալական մանկավարժությունը. «Մանկավարժություն», գիտամեթոդական վերլուծական ծրագիր, Եր., N4, 2010, էջ 39-46:

5. **Պետրոսյան Ա.**, «Սոցիալական մանկավարժություն» գիտությունը ընդհանուր մանկավարժագիտության ճյուղ չհամարելու հիմնավորումը: Գիտական հոդվածներ (Մանկավարժություն և մեթոդիկա), Վանաձոր, 2010, էջ 162-168:

6. **Պետրոսյան Ա.,** «Սոցիալական մանկավարժություն» հասկացությունը՝ քննարկման առարկա: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, N1-3, 2012, էջ 67-69:

7. **Պետրոսյան Ա.**, «Մանկավարժություն» և «Դաստիարակություն» հասկացությունների բովանդակությունների հստակեցման մասին», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, N1-3, 2013, էջ 63-69:

8. **Պետրոսյան Ա.**, «Մանկավարժական հասկացությունների նորացումը որպես անհրաժեշտություն», «Մխիթար Գոշ» /գիտական հոդվածներ/, Վանաձոր, N2, 2015, էջ 55-60:

ПЕТРОСЯН АНАИТ РАФИКОВНА

ПРОБЛЕМА ИННОВАЦИОННОЙ МОДИФИКАЦИИ ПЕДАГОГИЧЕСКИХ ПОНЯТИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 13.10.2016 г. в 12^{00} на заседании специализированного совета по педагогике 020 "Педагогика" ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

Резюме

Актуальность исследования. Педагогика, как одна из древнейших наук, в настоящее время имеет в определенной степени сформированный категориальный аппарат, в котором с разным уровнем конкретизации аккумулируется педагогический опыт. Вместе с тем, в научно-понятийном аппарате постоянно происходят процессы, которые связаны с трансформацией содержания и объема категорий, с приобретением новыми понятиями категориального статуса или, наоборот, с утратой прежнего значения отдельными категориями.

Терминологические проблемы, связанные с педагогическими понятиями, особенно обостряются в период интенсивного развития педагогической науки и в условиях реформирования образовательной системы. В связи с этим, поступательное развитие педагогики, как науки и сферы практической деятельности, сопряжено с целым рядом специфических проблем, которые относятся к ее категориальному аппарату.

В современной армянской педагогической науке решение проблем понятийно-терминологического аппарата является приоритетным. Значимость исследований в этом направлении в большей степени зависит от глубокого анализа всего пути становления и развития педагогического понятийно-терминологического аппарата.

В современной педагогической науке модификация понятийно-терминологического аппарата считается одним из приоритетных направлений. Исследования в этой области способствуют более глубокому и фиксированному развитию педагогического знания, его теоретической стабильности.

Задачи исследования. В соответствии с поставленной целью и выдвинутой гипотезой предстоит решить следующие задачи:

1.определить задачи изучения,систематизации и формирования системы современных педагогических понятий:

2. Выявить ведущие факторы процесса инновационной модификации и

развития современных педагогических понятий.

3. Выявить противоречия и проблемы формирования понятийной системы социальной педагогики как научного направления педагогики.

4. Определить условия инновационной модификации и дальнейшего развития понятий социальной педагогики.

Цель исследования. На основе теоретических исследований выявить сущность развития системы современных педагогических понятий и обосновать необходимость модификации системы понятий социальной педагогики как педагогической научной отрасли.

Научная новизна исследования.

1.Выявлены характеристики педагогических понятий с позиций философии, языкознания и педагогики.

2.Выявлены тенденции модификации педагогических понятий, отражающие проблемные поля педагогической науки, обозначена взаимосвязь с педагогической теорией и практикой, социально-политическими, культурными, научными и экономическими изменениями общественной жизни.

3.Разработана аргументационная база для замены термина «социальная педагогика» на термин «социальное воспитание» так как:

а) считать деятельность социального воспитателя педагогической, равно как и использование термина «социальный педагог» представляется нецелесообразным по причине того, что функции педагога-воспитателя и социального воспитателя коренным образом отличаются.

б) сравнительный анализ понятий «социализация» и «воспитание» на понятийной уровне позволяет сделать следующий вывод: социализация является результатом воспитания, следовательно, процес социализации включает в себя, в отличие от педагогики, дифференцированные реалии. Знания, полученные в результате этого инновационного подхода, в свою очередь, могут стать базой для дальнейшего развития социального воспитания;

Теоретическое значение результатов исследования. Выявлены сущность и тенденции модификации педагогических понятий, связанные с динамикой педагогической теории и практики, а также с изменением социально-политических, экономических и культурных условий жизни, что расширяет научные представления о развитии педагогической науки. С выявлением противоречий и проблем модификации педагогического категориального аппарата, развивается общая теория педагогической терминологии.

Теория воспитания обогащается новым содержанием понятия «социальное воспитание», благодаря которой педагогическая наука пополняется теоретическими положениями, в результате чего именно воспитание становится приоритетной целью в школьном обучении, и тем самым стимулируется развитие теории управления воспитательным процессом в ходе учебной деятельности.

Практическое значение результатов исследования. Результаты исследования могут использоваться во время преподавания дисциплин «Педагогика» и «Социальная педагогика». Одновременно они могут стать основой для внесения соответствующих корректировок в педагогические словари.

Апробация исследования и внедрение результатов. Апробация исследования прошла в Ванадзорском армяско-российском международном университете «Мхитар Гош», на кафедре педагогики Ванадзорского государственного университета имени О.Туманяна, в старшей школе №5, в основных школах №28 и №7 г. Ванадзора. Достоверность апробации обеспечена на научной конференции, организованной ВГУ (тема доклада – «Социальная работа в детском доме»).

Структура и объем диссертации. Диссертация объемом 135 страниц состоит компьютерного текста состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

По теме диссертации имеется 8 публикаций.

ANAHIT PETROSYAN RAFIK

THE ISSUE OF MODERNIZING THE FUNDAMENTAL CONCEPTS OF PEDAGOGY

This thesis is towards a degree of candidate of Pedogogical Sciences, specialty 13.00.01. "Theory of Pedagogy and History".

The defence of the thesis will take place on 13.10.2016 at 12^{00} at the meeting of the specialised pedagogical committee 020 "Pedagogy" HAC the Armenian State Pedogogical University after Kh. Abovyan.
Address: Tigran Mets Str. 17, Yerevan, 0010.

Summary

The Relevance of the research: Pedagogy, as a one of the oldest research fields, has currently got a set of solidified system of concepts, where the pedagogical experiences are collected with varied levels of clarity. Additionally, a number of activities are continuously taking place in the system of scientific concepts, which are connected with the content of the formation of the categories or the opposite – the loss of the previously accepted meaning of the categories.

The problems of terminology associated with the pedagogical concepts are becoming more acutely problematic especially during the stages of intensive development and in the environment of pedagogical reforms. In that respect, the development of pedagogy, as a scientific and practical advancement of the area is enthused with a set of specific problems, which are related to the system of its concepts.

The resolution of the issues related to the contemporary terminological system in education come at a foremost importance. The educational research in the area, with regards to the above point, fosters the development of appropriately deep knowledge and systematic understanding, as well as the solidity of its theoretical foundations.

The aim of the reserarch: Based on theoretical research, identify the core of the development of the contemporary system of pedagogical concepts and develop a foundation for the need of renewing the system of pedagogical concepts in this field of science.

Research Problems. In line with the primary researchaim and the formulated hypothesis, the following problems areto be resolved.

1. Identify the probles of studying,sistematising and formulating the systems of contemporary pedagogical concepts.

2. Identify the leading factors of the processes of innovative modification and the development of the pedagogical concepts.

3. Identifythe contradictions and problemsof forming of the conceptual system of social pedagogy as a research direction in the pedagogical sciencearea.

4. Set the conditions of modification and further development of the concepts of social pedagogy.

The scientific novelty of the research:

1. The characteristics of the pedagogical concepts, from the philosophical, linguistic and educational perspective, have been identified.

2. The rationale, reflecting the current state of the educational research field, for the renewal of the system of pedagogical concepts have been identified, taking into account the inter-relation of the educational theory and practice, as well as the social, cultural, scientific and economic factors of social life.

3. A scientific branch of pedagogy has been presented, using the subject language of social pedagogy, its concepts and the issues related to the discussion of the categories.

4. A body of knowledge for replacing the Social Pedagogy with Social Upbringing has been developed due to the following:

a. The activities of a social upbringer do not match those of a pedagogue in the current environment given the use of the term “Social Pedagogue”, as the principle roots of the padegogue-upbringer and a social upbringer are different.

b. From the comparison of the meaning of the concepts of “Socialization” and “Upbringing” one can infer that socialization is one of the products of social upbringing, therefore, they do not characterize each other’s facts, contrary to how it is being presented in the current pedagogy. The knowledge developed as a result of this identification constitutes a foundation for the development of the social upbringing.

The theoretical value of the research: This research has identified the substance of renewing the pedagogical concepts and tendencies with regards to the pedagogical theory and practice, as well as in relation to the changes in the social, economic and cultural circumstances of lives. The latter extends the scientific views on the practice of pedagogical science. By identifying the concepts of the system of pedagogical terminology and the issues of their renewal, the theory of pedagogical terminology is being further developed.

The theory of “social upbringing” is being enriched by the new meaning of the concept, with the support of which, the science of pedagogy is being replenished with the theoretical principles that make upbringing the overarching aim of schooling, which foster the development of administration of upbringing taking place through teaching.

The practical significance of the research: The outcomes of the research can be applied to the teaching of “Pedagogy” and “Social Pedagogy”. At the same time, these outcomes can become a foundation for introducing corrections in pedagogical dictionaries.

The structure and volume of the thesis: The thesis contains of an introduction, three primary chanters, conclusions and references. The length of the thesis is 135 typed pages.

8 articles have been published on this topic.